**351. ՄԻ ԱՅԼ ՔԱՐԻ ՎՐԱ, 3 տող.**

ՐԳՍԻԾԱԻ
ԱՄՆ ՍԱՐԳՍ
ԽԱՓԱ Ն

ՍԲ, ՍԱՐԳՍԻ ՏԱԻՐՆԻՆ ԾԱՌԱՄՆ ՍԱՐԳՍԻ ԱՆԽԱՓԱՆ...

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**352. ԽԱՉՔԱՐ,** *վերին մասը կոտրված, ընկած է ս. Աստվածածնի մոտ, շրջանակներին և տակին.*

ԽԱ
ԱՍ
ՀԱ
ՍԱ
ԻՍ

Ւ·
Ն·
ՐԳ
ԴԱ

ԻԻԹՐԴԻՔ ՊԱՊԱԾԱ
ՐԻՆՈՒԱՂԵԿԻՆ

. . ԽԱՉՍ . . . ՀԱՍԱՆ, ԴԱԻԻԹ ՈՐԴԻՔ ՊԱՊԱԾԱՑՐԻՆ ՍԻ ԱՂԵԿԻՆ։

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

**353. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ,** *ստորին մասում միայն թվականը.*

ԹՎՋԾԲ

ԹՎ. ՋԾԲ։ (1503)։

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

## 22. ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔ

*Գտնվում է համանուն պատմական գյուղում (մոտիկ անցյալում կոչվում էր Ալոասի, այժմ՝ Ղզլգյուղ)։*

*Հնում Արատեսը եղել է վանքին կից մի փոքրիկ գյուղ, ընդամենը 6 չափ հարկով։*

*Վանքը բաղկացած է իրար կից 4 մեծ և 5 փոքր շենքերից, դրանցից 8-ը կանգնած են նույն ուղղության վրա՝ հյուսիսից հարավ, իսկ մեկը կից է դրանց արևմուտքից։*

*Վանքի եկեղեցիներն արձանագրությունների մեջ կոչված են ս. Սիոն, ս. Կարապետ և ս. Աստվածածին, բայց այժմ հնարավոր չէ ճշտորեն որոշել, թե անուններից որը որ շենքին է վերաբերում։ Շինարարական արձանագրությունների բացակայության պատճառով հնարավոր չէ որոշել նաև շենքերի ճիշտ թվականը։*

*Վանքի շինությունն սկսվել է հյուսիսից. կենտրոնում մի թաղածածկ եկեղեցի է, որին հյուսիսից կցվել են երկու և հարավից՝ երեք մատուռներ։ Շենքերի այս առաջին խումբը կառուցվել է հավանաբար VII դարում և կոչվել ս. Սիոն։*

*Երկրորդ հերթին շինված պետք է լինի ամենահարավային գմբեթավոր եկեղեցին, հավանաբար X դարում։ Վերջինիս հյուսիսային պատն իր արևելյան ծայրով միանալով երեք կից մատուռների պատին, նրանց առաջ ստացվում է բաց տարածություն, երեք կողմից եզերված շինություններով։ Այդ անպատշաճությունը վերացնելու նպատակով նախորդ շենքերին կցել են որմնամույթեր և միայն արևմտյան նոր պատ շինելով՝ երեք մատուռների առաջ եղած բաց տարածությունը վերածել են քառակուսի հատակագծով գավթի։ Հավանական ենք համարում, որ այդ գավիթ-եկեղեցին կոչվել է ս. Կարապետ իսկ գմբեթավորը՝ ս. Աստվածածին։*

*Այն, որ մեր նկարագրած հերթականությամբ են շինվել այս երեք շենքերը, ապացուցվում են նախ ս. Կարապետի երկու՝ հարավային և հյուսիսային, անկախ սյուներ չունենալով, ապա նրանով, որ գմբեթավոր եկեղեցու պատին կցված որմնամույթերից կազմվող կամարաձև խորշի մեջ գրված Ստ. Օրբելյանի արձանագրությունը (№ 563) համարեցված է*

արդեն ձևավորված խաչքի տարածությանը։ Այդ արձանագրությունը գրված է 1301 թ.։ Հետևաբար այդ գավիթ եկեղեցին պետք է կառուցված լինի դրանից առաջ. արդեն գավիթ-եկեղեցու հյուսիսային որմնամույթի վրա կա մի կարճ արձանագրություն 1251 թվ. (արձ. 358)։ Քանի որ գմբեթավոր եկեղեցին շինված է, ինչպես կտեսնենք՝ X դարում կամ ամենաուշը XI-ի սկզբում, ապա ուրեմն գավիթ-եկեղեցին կառուցվել է մոտավորապես XI—XII դարերում։

Հարավային, գմբեթավոր եկեղեցին ևս շինարարական արձանագրություն չունի։ Մեզ հաջողվեց, սակայն, նրա ներսում գտնվող և անվերծանելի համարված մի արձանագրությունը կարդալ, որն ունի 1073 թ. (արձ. 356). որովհետև արձանագրությունը նվիրատվական է, հետևաբար շինությունը պետք է կատարված լինի դրանից առաջ՝ X կամ XI դդ. սկզբներում։ Ենթադրում ենք, որ այս գմբեթավոր եկեղեցին է անվանվել ս. Աստվածածին։

Շինարարական վերջին աշխատանքներն այս վանքում կատարվել են XIII դարի երկրորդ կեսում. այս վերջին աշխատանքների մասին կա արձանագրություն (արձ. 359), համաձայն որի վանքի առաջնորդ «Նվաստ աբեղա» Հայրապետն 1270 թ. շինել է գավիթը և վերանորոգել վանքի շինությունները ընդհանրապես։ Այդ նորաշեն գավիթը գտնվում է գմբեթավոր եկեղեցու արևմտյան կողմում և հենց նրա արևմտյան պատի վերևի մասում՝ ներքուստ գրված է վերոհիշյալ արձանագրությունը։

Այս գավիթն իր ճարտարապետական առանձնահատկություններով ոչ միայն Արատեսի վանքի զարդն է, այլև հայ ճարտարապետության մեջ ուրույն և նշանավոր տեղ գրավող՝ խաչավորվող կամարներով կառուցված շենքերի լավագույն օրինակներից մեկը։

Բարեբախտաբար գավթի շինության ոչ միայն ստույգ թվականն է հայտնի, այլև կառուցող վարպետ-ճարտարապետի անունը։ Գավառական բժիշկ, բայց և անխոնջ հնասեր ու արձանագրությունների լավ վերծանող Բաջբերունին (Գաբրիել Հովհաննիսյան) իր ժամանակին շենքի վերին մասից ընկած կամարի մի բեկորի վրա կարդացել է Սիրանես անունը պարունակող մի կարճ հիշատակագրություն, որն այժմ կորած է (արձ. 361)։ Մենք պարզել ենք, որ Սիրանեսը Տարսայիճ Օրբելյանի օրոք նրա «դրան» ճարտարապետն է եղել, նրա պատվերով կառուցել է Սմբատ իշխանաց իշխանի տապանատունը Նորավանքում և այլ շենքեր։ Պարզել ենք նաև, որ միջնադարյան հայ ճարտարապետները հենց այդպիսի կարճ հիշատակագրություններ էին թողնում իրենց կառուցած շենքերի ակնառու տեղերում։ Շենքի վրա աշխատած երկրորդ վարպետին համարում ենք № 362 արձանագրության մեջ հիշատակված Դրգորիկին, որի անունը փորագրված է մույթի խոյակի վրա։

Արատեսի վանքը հատուկ նշանակություն է ունեցել XIII դարի վերջերին, պատմագիր Ստ. Օրբելյանի եպիսկոպոսության ժամանակ։ Հեղինակավոր, եռանդուն և հարուստ պատմագիրն իր գավազանի տակ համախմբելով սյունյաց պառակտված թեմը, Վայոց ձորի Նորավանքը դարձնում է իր նստավայրը։ Նորավանքը գտնվում է մի անձուկ ձորի մեջ, ծվարած լերկ ժայռերի ստորոտում, ուր ամառները հեղձուցիչ տոթ է լինում։ Իշխանազուն եպիսկոպոսը որոշում է իր և միաբանների վիճակը թեթևացնելու համար Արատեսի վանքը դարձնել եպիսկոպոսական ամառանոց։ Այն գտնվում է բարձրանիստ և ընդարձակ հովտում, շրջապատված սառնորակ աղբյուրներով։ Այդ նոր նպատակի համար ոչ միայն բարեկարգվում է վանքը, այլև եպիսկոպոսը նրան է նվիրում իր «հայրենական» կալվածներից 8 գյուղ՝ Գեղարքունիքում (արձ. 364, Ստ. Օրբելյան, Պատմություն, 493)։ Երկրորդ արձանագրության համաձայն (№ 363), Արատեսի վանքը հաստատվում է որպես Նորավանքի սեփականություն, և վերջինիս վրա է դրվում ամառանոց վանքի պայծառության և շենության հոգսը (Ստ. Օրբելյան, Պատմություն, 493—494)։

Արատեսի վանքի շրջապատում եղել է մեծ գերեզմանատուն, ուր այժմ մի քանի խաչքարեր և տապանաքարեր են մնացել միայն։ Իսկ գյուղի հարավում՝ ձորամիջին, լերկ և պատանման ժայռերի վրա քանդակված են բազմաթիվ խաչեր, որոնցից մի քանիսի տակին կան հիշատակագրություններ։

Արատեսի վանքից և շրջապատից այս ժողովածուում ամփոփված են 36 արձանագրություններ, որոնցից 13-ը հրատարակվում են առաջին անգամ։ Արձանագրություններից հնագույնը 967 թվականից է, իսկ նորը՝ 1713 թվականից։

**354. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶՈՒՅԳ ՄԱՏՈՒՌՆԵՐԻ** *արևմտյան պատին, մուտքի մոտ, հիմքից վեր, առաջին շարքի մի քարի վրա (զավթի մեջ), 5 տող.*



:ՆԺԶ: (964) Թ[ՎԻՆ], ԵՍ Վ[Ա]ՀԱՆԻԿ ՑԻ[Մ]ՈՑ ԸՆԶԻՑ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽՈՒՐՐ ԳԻՐԳ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ! ՀՈԳՒՈ ԻՄՈ. ՈՐ ԿԱՐԴԱ ԶԻ[Ս] ՅԻՇԵՑԷ ԵՒ ԱԾ ԶՆԱ ՅԻ[ՇԷ]:

*Ծանոթ. Տասնավորը կարելի է «Մ» կարդալ:*

**355. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶՈՒՅԳ ՄԱՏՈՒՌՆԵՐԻ** *արևմտյան պատին, նախորդից հյուսիս, մի շարք վեր, ոտնախաչի թևերի տակ, 6 տող.*



ՍԱՀԱԿ ԵՐԵՑ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՔ. ԹՎ. :ՆԻԴ: (975):

*Հրատ. Ջալալեանց, 158; Քաջբերունի, Արարատ, 1888, Բիվ ԺԲ, 770; Ալիշան, 144; Լալայեան, Ազգ. Հանդ. XXV, 84:*

**356. ԴՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիս-արևելյան ավանդատան մուտքի ճակատին, 9 տող.*



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ԱՐՏԱՒ[Ա]ԶԴԱ, ՈՐ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՔԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ[Ք]ՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՆ ԵՆ՝ ՅԱՅՏՆՈՒԹՆ[Ն] ՊԱՀՔՆ :Ե: ԱՒՐ ՎԱՐԴԿԱԺԱՄ ԱՄ[Ե]Ն,ԵՆ. Ո[Ր] ԶԱՌՆԷ՝ ՅԵԿԵՂԵՑՈՅՍ ԿԱՊԱԾ Է. [ԵՒ] ՈՐ ԶԳԼԻՆ ՀՈՂՆ, ՈՐ ՅԵՐԵՐՆ Է. ԵՒ[ ]ԶՈՂՈՂԻԿԻՆ ԱՅԳԻՆ՝ ՈՐ ՅԵՂԵԳԻՍ՝[ ]ՀԱՆԵԼ ԶԱՆԱՅ ՅԵԿԵՂԵՑՈՅՍ ՆԶ[Ո]ՎԱԾ ԵՆ. ԹՎ. :ՇԻԲ: (1073) ԱՄ[Է]Ն:

*Ծանոթ. Արձանագրության երկու քարերի ամբողջ մակերեսը խիստ հողմնահարված-մաշված է, տառերը շատ մակերեսային են. առավել ևս վերջին տողը:*

*Թվականի ճշտությունը կասկածում ենք, բայց այդպիսի փոփոխության հիմք է տալիս Վարդիկ անվան առկայությունը, որը Վայոց ձորի արձանագրությունների մեջ մեկ անգամ է հիշատակված՝ Ցախաց քարում, և որի վերջին թվականը 1061-է, որը և մոտենում է այս արձանագրության թվականին։*

Լուսանկ. 138

*357. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, մուտքից հյուսիս, արտաքուստ. 11 տող.*



:ՈԿԹ: (1220) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ԼԱՇԱՒՆ ԵՒ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ ԻՒԱՆ(Է)Ի ԱԹԱԲԱԿԻ, ԵՍ ՎԱՍԱԿ ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ ԿՈ|ՂՄՆԱՊԱՀ Ի ԳԱՌՆՈՑ ՄԻՆՉԵՒ Ի ԲԱՐԳՈՒՇԱՏ ԵՒ | ԱՌԻ ԶԱՄՐՈՑԱՆԻՍ ԵՂԵԳԵԱՑ ԶՈՐՈՑՍ ԱՒԳՆՈՒԹԵ(ԱՄ)Բ|Ն ԱԾ. Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ ՏՐ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԱՌԱՋՆ|ՈՐԴ ՎԱՆԱՑՍ ԵՒ ՆՈՐԱՎԱՆԱՑՆ ՀԱՍՏԱՏԵՑԱ(Ք) :Գ: ԺԱՄ. ԶՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԶԵՐԵՔ ԱՒՐՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԶՈՐՈՑՍ, |ՈՐ ՎԱՍԱԿԱ ԿԱՏԱՐԵ|Ն. ԵՒ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱԾ. ԱՄԷՆ:

*Հրատ. Ջալալեանց, 157—158։ Քաջբերունի, Արարատ, 1888, Թիվ ԺԲ, 769։ Ալիշան, 143։ МАК, 87։ Լալայան, Ազգ. Հանդ. XXVI, 82։ Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 2։*



*358. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԹԻ հյուսիսային որմնամույթի վրա, մանր խաչերի արանքներում.*

ԹՎ. :Չ: (1251) ԱԾ ՈՂՈՐՄԻ ՆԱՑԱՆ. ԱՄԷՆ:

Լուսանկ. 139

*359. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԹԻ արևմտյան պատի վերևի մասում, մուտքի կամարից վեր, ներքուստ, 10 տող.*



ԻԹՎ. :ՉԺԹ: (1270) Ի ՏԷՐՈՒԹՆ. ՓԱՌԱՒՈՐ ԻՇԽԱՆԻՆ ՍՄԲԱՏԱ ԵՒ ՀԱՐԱԶ|Ա-ՏԻՆ ԻՒՐՈ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ. ԵՍ ՆՎԱՍՏ ԱԲԵՂԱ ՀԱՅՐԱ|ՊԵՏ ԱՆՈՒՆ, ՍՊԱՍԱՒՈՐ ԲԱՆԻ, ԿՐԿԻՆ ՇԻՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ, ՇԻՆԵՑԻ ԶԳԱ-ՒԻԹՍ ԵՒ ԶԱՅԼ, ԻՆՉ ՈՐ| ԵՐԵՒԵՆ ԱՇԽԱՏՈՒԹԻ. ԵՒ ԶԳՈՉՈՑ ԱՅԳԻՆ ՅՈՍՏԻՆ ԵՒ ԶԹԵՂՈՒՏՆ Ի| ՄՃՌԿԱՁՈՐ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄՔ ԳՆԵՑԻ ԵՒ ՏՎԻ ՍԲ ՍԻՈՆՍ. ԵՒ| ԵՂԲԱՐՑՍ ԿԱՄԱՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ ԶՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ ՊՇԱԲԱԹՆ| ԵՒ ԿԻՐԱԿԻՆ ԻՆՁ ՑԻՇԱՏԱԿ [Կ]ԻՐԿԻՆ . . . ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԽ[Ր]Հ[Ն]ԻՆ ՅԱՄԷՆ ՍՐԲՈՑ ԵՒ ՀԱԿԱՌԱԿՈՂՔՆ| ՏԱՆՋԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ ԵՒ ԸՆԴ ԲԵԼԻԱՐԱ. Ի ՄԵԾԻ ԱՒՈՒՐՆ. ԱՄԷՆ:

*Հրատ. Ջալալեանց, 157: Քաջբերունի, Արարատ, 1888, Թիվ ԺԲ, 767—768: Ալիշան, 142: MAK. 89: Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 80—81:*

***360. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ,** գտնվելիս է եղել գմբեթավոր եկեղեցու արևմտյան պատի տակ.*

Ձերջանիկ րաբունապետն Հայրապետ, նորոգող այսմ անապատի, փոխեցաւ

թվին :ՉԼԹ: (1290)

Ծանոթ. *Անշուշտ նախորդ արձանագրության մեջ հիշատակված Հայրապետ աբեղան է սա:*

*Տապանաքարն այժմ չկա. Բաշխիրունին հետևյալ կերպ է նկարագրում՝* «Մի օրարոցած կապույտ տապանաքար, ո՜հ, ի՛նչ խոշոր, գեղեցկատեսիլ և շքեղ տառեր են և ի՞նչպես ամբողջությամբ մնացել է այդ հիանալի արձանագրությունը»:

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, Թիվ ԺԲ, 772: Ալիշան, 142: Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 83:*

**361. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԹԻ** *վերին կամարից ընկած մի քարի վրա, 1 տող.*

Աստուած ողորմի Սիրանէսի.

Ծանոթ. *Սիրանեսը Տարսայիճ Օրբելյանի օրոք Նրա գլխավոր ճարտարապետն էր։ Կառուցել է նաև Սմբատ Օրբելյանի տապանատունը Նորավանքում 1275 թ.։ Արդյունքում, հավանական է, որ № 359 արձանագրության մեջ հիշատակված շինարարական աշխատանքները կատարված են Սիրանեսի ձեռքով՝ 1270 թվականին։*

*Այդ քարն այժմ կորած է։*

Հրատ. *Քաջբերունի, Արարատ, 1878, թիվ ԺԲ, 768։*

**362. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԹԻ** *հյուսիս-արևելյան մույթի խոյակի վրա, 1 տող.*

ԳՐԳՈՐԻԿ          Գ Ր Գ Ո Ր Ի Կ

Ծանոթ. *Անտարակույս, գրված կարող է լինել միմիայն շինարարության ընթացքում։ Ճարտարապետական այսպիսի կարևոր մանրամասների վրա կարճ հիշատակագրություններ անում էին միայն վարպետները։*

**363. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավային պատի հարավային անկյունում, արտաքուստ, 15 տող.*



ԿԱՄԱՒ ԿԱՐՈՂ, ՀԶԱՒՐԻՆ ԱՅ. ԵՍ ՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ,| ՍՒՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՐԴԻ ՄԵԾԻ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ| ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ԾԱՆԵԱՎ ԶԻ ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԺԱՌԱՆԳՈՒԹԻ, ԷՐ ԼԵԱԼ ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱՎԱՆ|ՒՑ ՍԲ. ՈՒԽՏԻՆ, ՀԱՍՏԱՏԵՑԻ ԵՎ, ԵՍ| ԶԱ ՐԱՏԷՍ, ՈՐ ՄԵՐ ՍԵ|ՓԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ԷՐ ԻՒՐ ԱՄԷՆ ՍԱՀՄԱՆԱՒՔ ԳԵՂՈՎ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՍՏԱՏ ԺԱՌԱՆԳՈՒ- ԹՆ. ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ ՍԲ. ԵՒ ԳԵՐԱՓԱՌ ԴԱՄԲԱՐԱՆԻՆ ՄԵՐ ՆՈՐԱՎԱՆՒՑ. ԶՈՐ ՄԻ ՈՔ ԻՇԽ|ԵՍՑԷ ԽԱԽՏԵԼ ԵՒ ԽԱՓԱՆԵԼ ԿԱՄ ԻՇԽԱՆ ԿԱՄ Ի ՁԵՌ| ՆԱՒՈՐԱՑ, Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ ՑԱՒՏԱՐԱՑ. ԵՒ ԹԷ ՀԱԿԱՌԱԿԻՆ'| ԱՆԷԾՍ ԵՒ ՆԶՈՎՍ ԱՌՑԷՆ Ի ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԵ- ՆԷՆ ԵՒ ՅԱՄ|ԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ԵՒ ՄԵՐ ՊԱՐՏԵԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՅ.|ԵՒ ԹԷ ՏԱՃԻԿ ԱՒԱԳ ՓՈԽԻ ԵՒ ՀԱՆԵԼ ԶԱՆԱ ՑԱՅ. ԵՒ| ՑԻՒՐ ՄԱՀՄԷՏԷՆ ԱՊԻԶԱՐ Է ԵՒ :Ո: :Ո: ՆԱԼԱԹ ԼԻՆԻ. ԹՎ. . . . .

Ծանոթ. *Արձանագրությունը ողողված է կարմիր ներկով։ Վերջին տողը դիտավորյալ կերպով ջարդված է, թվականը նշանակող տառերն իսպառ ոչնչացված են։ Պարզ է սա-*

կայն, որ վերաբերում է պատմագիր Ստեփանոս Օրբելյանին, քանի որ այդ կարգադրության մասին նա հիշատակել է և իր «Պատմության» մեջ (տե՛ս ՀԱ, 493—494)։ Հետևաբար գրված է 1303 թվականից առաջ։

Արձանագրության առաջին 7 տողերի վերջավորությունները կրող քարը ընկած-կորած է. լրացնում ենք հին լուսանկարի օգնությամբ։

Հրատ. Ջալալեանց, 157։ Քաջբերունի, Արարատ, 1888, Թիվ ԺԲ, 768։ Ալիշան, 142—143։ МАК՝ 90։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 79—80։ Լուսանկ. 140

**364. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատին արտաքուստ (կենտրոնական պատի մեջ), 15 տող.*



ԿԱՄԱՒ ԿԱՐՈՂ. ՀԶԱՒՐԻՆ ԱՅ. ԵՍ ՏՐ ՍՏԵՓ|ԱՆՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԱՐՀԷՊԻՍԿՈՊՈՍ, ՈՐԴԻ ՄԵԾԻ|ՆԻ ԲԱՐԷՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱՅ|ԻՃԻՆ, ԵՏՈՒ ՍԲ. ՍԻՈՆԻՍ ՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ՍԲ. ԿԱՐԱՊԵ|ՏԻՍ Ի ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՎԻ-ՃԱԿԷՆ Ի ԳԵՂԱՐՔՈՒՆՈՅ՝ ԶԳԵՂՆ ՎԱՆ|ԷՎԱՆ՝ ԶԿԻՏԱՆՈՑՆ, ԶՓԱՌԱԿՈՒՆԻՔ, ՄՇՊԼԱՅՇԷՆ,| ՇԻԿԱՑԿԱՐԲՆ, ԽՈՒԼԻՆԱԿՆ, ՔԱՒԹԱՐԱՆՑ, ԶԴԱՐԲԱՆ|ՏՆ, ԶԻ ՄԻ ՈՔ. ԻՇԽԵՍՑԷ ԽԱԽՏԵԼ ԿԱՄ ԽԱՓԱՆԵԼ Ի ՄԵՐ|ՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ, ԶԻ ՄԻ ՊԱՏԻԺՍ ԿՐԵՍՑԷ։ ԱՅԼ| Վ|Ա|Ս|Ն| ԱՅՍ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ, ՈՐ ՏԵՂՍ ՄԵՐ ՆՍՏԱԳԱՀ Է,| ՈՒ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ԻՄ ՓԱՌԱՒՈՐ ՀԱՐԱԶԱՏԻՆ| ԷԼԻ-ԿՈՒՄԻՆ ՅԻՇԱՏԱԿՆ ԱՅԼ ԱՍՏ ԷՐ ԿԱՐԳԱԾ ԱՄԻՍ.| |ՈՎ.| ԶՄԵՐ ՍԱՀՄԱՆԱԾ ԿՏԱԿՍ ԱՅԼ ՑԵՂ ԱՌՆԷ, ՄԱՍՆ ՈՒ ԲԱԺԻՆ ԶՈՒԴԱՅԻ ԱՌՑԷ ՈՒ ԶԱՅԼ ԽԱՉԱՀԱՆՈՒԱՑՆ|. ԵՒ ՄԵՐ ՊԱՐՏԵ|Ա|ՑՆ ՏԷՐ Է ԱՒԱԶԻ ԱՅ. ԹՎԻՍ ։ՉԾ։ (1301)։

Մանոթ. Քաջբերունուն հետևելով՝ Ալիշանը ևս թվականը նշանակել է ՉՀ, որ սխալ է, իսկ վերջինս իր հերթին թյուրիմացության առիթ է տվել Հ. Աճառյանին, որը անձնանունների բառարանում (Դ. 639) այս Ստեփանոսին առանձին է նշանակել։ Կասկած չի կարող լինել, որ նվիրատուն պատմագիր Ստեփանոս Օրբելյանն է՝ մահացած 1303 թ.։ Արձանագրության մեջ գրչի սխալ ևս չկա, պարզ գրված է ՉԾ = 1301 թ.։

Հրատ. Ջալալեանց, 158։ Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ ԺԲ, 770։ Ալիշան, 144։ ՄԱԿ, 92, Լալաեան. Ազգ. Հանդ. XXVI, 82։
Լուսանկ. 111

**365. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ (գավթի մեջ), 8 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՆԻԿ,ՈՒՆՍ ԱՂԱ-
ԽԻՆ ՔԻ. ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ՍԲ. ՈՒԽՏՍ|
ԱՐԱՏԷՍ ԱՐԴԵԱՄԲՔ, ԵՒ ՍԱՀՄԱՆԵ-
ՑԻՆ ՄԻԱԲԱՆՔՍ ՁՍԲ. ՍԱՐԳՍԻ ՇԱ-|
Բ|ԱԹՆ ԱՒՈՒՐՆ ՊԱՏԱՐԱԳՆ ԻՆՁ
ՑԻՇԱ|ՏԱԿ, ԵՒ ԶԿԻՐԱԿԷՆ ԱՌՆ ԻՄՈՑ|
ՀԱՍԱՆԱ.|ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒ|ՐՀՆԵԱԼ-Ք
ԵՂԻՑԻՆ ՅԱՅ.

Մանոթ. Նվիրատուի անունը հնարավոր է նաև ՆԻԿ,ՈՒՆ վերծանել, համաձայն գրչության։
Համարում ենք XIII դարի վերջերին գրված։

Հրատ. Ջալալեանց, 158։ Ալիշան, 143։ ՄԱԿ, 88։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 80։
Լուսանկ. 142

**366. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ (գավթի մեջ), 5 տող.*



ԵՍ ԹԱՃՄԼԷՔ ՄԻԱԲԱՆԵՑ-
ԱՅ ՍԲ ՈՒԽՏԻՍ ,ՄԻԱԲ|ԱՆՔՍ
ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ ՍԲ ԽԱՉԻՆ
ՇԱԲԱԹ|ԱՒՐՆ :Ա. ՊԱՏԱՐԱԳ.

Մանոթ. Համարում ենք XIII դարի վերջերին գրված։

Հրատ. Ջալալեանց, 158։ Ալիշան, 143։ ՄԱԿ, 88։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 80։

367. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԹԻ հարավ արևմայան խորշի կամարի քարի վրա (երեսով արևմուտք), 10 տող.



ԵՍ ՄԱՄԱՔՍ Մ[Ի]ԱԲԱՆԵՑԱ ԵՒ ԷՏ[ՈՒ Ջ]Ի[Ն] ԶՈՒՆԷՒ [Ի] ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ. [Ս]ՊԱՍ ԱՒՈՐՔ ՍԱՀՄԱՆԵՑ[Ի]Ն :Ա: ԱՒՐ ՊԱՏԱՐԱՔ՝ ՓՈԽՍ ԱՆ ԱԾԱԾՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆ[Ի]Ն[Ի] ԱՑ ԵՒ ԽԱՓԱՆԻՉ[Ք]Ն ԴԱՏԻՆ

Ի ՏԷ.

Մանր. Դատելով անզարդությունից՝ պետք է գրված լինի շենքի կառուցման ժամանակ, իսկ կառուցումը կատարվել է ամենայն հավանականությամբ 1270-ական թվականների շուրջը, Հայրապետ աբեղայի օրոք (տե՛ս արձ. № 359)։

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ ԺԲ, 770։ Ալիշան, 142։ ՄԱԿ, 93։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 82։ Լուսաեն. 143

368. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԹԻ կենտրոնական որմնամույթի վրա, փոքր խաչերի տակ, 2 տող.



ԹՎ.[Ս] :ՋԽԸ: (1499)

369. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ արևմայան մուտքի հյուսիսային կողին խաչի կողքին, 8 տող.



ՍՐ ԽԱ[ՉՍ] ԿԱ[Ն]Կ[Ն]Ե[Ս]ՑՈՒՑԻ ՅՈՒՎ[ՊԷ]ԿԻ[Ն]

ԹՎ. :ՌԿԵ: (1616)

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ ԺԲ, 771։ Ալիշան, 144։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 84։ Լուսաեն. 144

370. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԹԻ հյուսիս արևելյան մույթի վրա, մանր խաչերի շուրջը.



ՍԲ ԽԱՉՍ ՄԱՐԴԱՄԻՆ, ԽԱԼԻՖԻՆ

371. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԹԻ հյուսիս-արևելյան մույթի վրա, խաչի տակ.



ՍԲ. ԽԱՉ[Ս]։

**372.** ***ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ** արևելյան պատին, խաչի կողքին, արաա-քուստ, 7 տող.*



ՍՐ. ԽԱՉԻ ԿԱՆԵՑՈՒՑ ՑԱՆՑԱՑ ՍՈՍՏԱՆԻՆ։

Լուսանկ. 145

ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

**373.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, գեղաքանդակ, գտնվելիս է եղել եկեղեցիների հարավային պատի տակ.*

Այս ճարկ տապանի Ցսվսէփու աստուածախաւս վարդապետին.
թվին :ՋԵ: (1456):

Ծանոթ. *Ըստ Ջալալյանի՝ .ՋԼԱ ։ Այժմ գոյություն չունի։*

*Հրատ. Ջալալեանց, 159։ Քաջբերունի, Արարատ, 1888, Թիվ ԺԲ, 772։ Ալիշան, 144։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 84։*

**374.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, գանվում է եկեղեցիների հարավում, ճամփի եզրին, վրան 3 տող.*





ԱՅՍ ՄԽԻԹԱՐ ԿԻՍԱԻՐԵԱՑ ՓՈԽԵՑԱ[Ի] Ի ՔՍ. ԵՒ ԵԹՈՂ ՍՈՒՔ
ԱՆՄԽԻԹԱՐՔ ՄՆՈՂԱՑՆ. [ԹՎ.] :ՋԺԳ: (1464):

Ծանոթ. *Վրան քանդակված է սազ նվագող, նստած՝ հացերով, ուտելիքներով և գինու գավերով ծանրաբեռնված սեղանի առաջ. թամքած ձի, աղեղ, վիշապ, գութան, սղոց, գըլխարկի կաղապարներ և այլ գործիքներ։*

*Առաջին տողը վերի շրջանակին է, իսկ թվականը արևելյան ներքևի անկյունում։*

*Հրատ. Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 84։*

**375.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**. գտնվելիս է եղել եկեղեցիների հարավային մասում.*

Խաչս բարեխաւս Նասարղուլին, որ տղայ հասակ մեռաւ. թվին :ՋՂ: (1531)

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1868, Թիվ ԺԲ, 772։ Ալիշան, 144։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 84։*



9—362

***376. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, գտնվելիս է եղել արևմտյան գավթի մեջ, ըստ Քաջբերունու.*

Ստեփաննոս պատանին չինեց զԱռաքեա, թվին. :ՉՁԲ:

*Ըստ Ջալալյանի.*

Ստեփաննոս պատանի, որդի Կարապետ աղին, կրկին նորոգեցի
զԱռաքէս. թվին :ՉԾԲ: (1303)

*Հրատ. Ջալալեանց, 158։ Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ ԺԲ, 768։ Ալիշան, 144։*

***ԽԱՉՔԱՐԵՐ**, հինգ հատ, **ԽԱՉ** բառի գրության հետաքրքիր ուղղագրությամբ. կանգնած են եկեղեցիների հարավային պատի տակ, մի շարքում, որոնցից վերին աջ անկյունը կոտրված է.*

✝ ԽՉՍԳՌԹՆ · · ·
Թ Վ
Ռ ՃԸ

***377.** ԽԱՉՍ ԳԹՈՒԹՆ . . . .*
Թվ. :ՌԺԸ: (1569):

ՍԲԽՉՍԲԱՐԷԽՒՍՂ · · ·

***378.** ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ Դ . . .*

· · · ՍԼՌԿԱՆԿՆՑԻԽՉՍՍԻԳ · · ·

***379.** . . . . ԿԱՆԿՆԵՑԻ*
ԽԱՉՍ ՄԱՐԳՍԻ . . . . :

Լուսանկ. 146

ԽՉՍԱՆԴՐ · · ·

***380.** ԽԱՉՍ ԱՆԴՐԻԱՍԻ . . . . :*

ԽՉՍԳԱՐԻՆ · · ·

***381.** ԽԱՉՍ ԳԱՐԻՆՍ . . . . . .*

***382. ԽԱՉՔԱՐ**, կիսովին խրված արևմտյան գավթի մեջ, ճակատին 1 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽՈՍՋԱՀԱ
ԿԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՈՍ ՋԱՀԱԿԻՆ

***383. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ՎՐԱ**, ընկած է եղել եկեղեցիների հարավային պատի տակ.*

Սուրբ խաչս բարեխաւս Մեհրապին:

*Հրատ. Ջալալեանց, 158։ Ալիշան, 144։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 84։*

***384. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, գտնվելիս է եղել եկեղեցիների հարավային պատի տակ.*

Սուրբ խաչս բարեխաւս Ջանաղին:

*Հրատ. Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 84։*

***385.*** *ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ, գտնվելիս է եղել գյուղի արևելյան եզրի գերեզմանատան մեջ.*

Այս է նանգիւս Սարգսի. թվին :ՌՃԿԲ: (1713):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ ԺԲ, 772։*
*Ալիշան, 144։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 83։*

*Գյուղից հարավ-արևմուտք, ձորի մեջ, գետակի ձախ ափի լերկ ժայռերի վրա փորագրված են բազմաթիվ մանր խաչեր և նրանց տակ հիշատակագրություններ.*

***386.*** Թվին :ՉԺԲ: (1263) Նշանս թանկին է, Աստուած ողորմի նմա. ամէն:

***387.*** Թվին :ՉԺԳ: (1264) Տէր Աստուած ողորմի Այապխտխին, ամէն:

***388.*** Սուրբ նշանս Հասանա է, որ կարգաւ յիշեցէք ի Քս թվին :ՉԺԵ: (1266):

***389.*** Թվին :ՉԺԵ: (1266):

*Հրատ. Քաջբերունի, Արարատ,*
*1888, թիվ ԺԲ, 773։ Ալիշան, 144—145։*
*Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 82։*

## 23. ԱՀԵՐՄՈՆԻ ԿԱՄ ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ

*Այս վանքը Վայոց ձորի հնագույն հուշարձաններից մեկն է։ Համաձայն Ստ. Օրբելյանի վկայության այն հիմնարկվել է 936 թվ., սյունյաց գահերեց իշխան Սմբատի և Հակոբ եպիսկոպոսի կողմից։ Ըստ պատմագրի նա գտնվելիս է եղել Եղեգիս ավանից դեպի վեր, գետակի մոտ, ժայռաձև լեռների ստորոտում՝ մի բարձրավանդակի վրա, որը կոչվել է Բարեան։*

*Նորաշեն այդ վանքում հավաքել և բնակեցվել են Բարեանի ծերպերում նախապես բնակվող ճգնավորներին և նրանց ավագագույնի անունով վանքը կոչել են* Աhեrմոնի վանք, *բայց հետագայում սովորություն է դարձել անվանել* Հերմոնի վանք:

*Վանքում շինված առաջին եկեղեցին եղել է գմբեթավոր և կոչվել է ս. Գրիգոր Լուսավորչի անունով։*

*Սմբատի ամուսին Սոփիա տիկինը գնել և վանքին է նվիրել գիմացի Հավուս գյուղը և այգիներ ու ծաղկոցներ Եղեգիս ավանում*[1]*։*

*Հերմոնի վանքի մշակութային ծաղկման շրջանը, սակայն, վերաբերում է* XIV—XV *դարերին։ 1338 թ. Գլաձորի նշանավոր համալսարանի գործունեության խափանումից հետո այստեղ է հաստատվում Եսայի Նչեցու աշակերտ և օգնական Տիրատուր վարդապետը և հիմք դնում մի նոր դպրոցի, որը դառնում է փաստորեն Գլաձորի մշակութային գործի շարունակողը Վայոց ձորում։ Այս դպրոցն իր գործունեությունը շարունակեց Տիրատուրի մահվանից հետո էլ (մոտ. 1372 թ.), մինչև* XV *դարի վերջերը։ Դպրոցը պատրաստեց նշանավոր մատենագիրներ, գրիչներ, նկարիչներ։ Հայտնի են Հերմոնի վանքում գրված 26 ձեռագիր մատյանները։ Ժամանակակից գրականության մեջ Հերմոնի վանքի տեղը ճշտված չէ։ Ս. Ջալալյանցը նույնացրել է այն Խոտակերաց կամ Փարկոփի վանքի հետ, որ սխալ է*[2]*։ Քաջբերունին նույնացրել է ներկայումս գոյություն ունեցող Գլունեյ վանքի հետ, որը, ինչպես կտեսնենք, ճիշտ է, բայց քանի որ նրա նույնացման համար միակ փաստը հանդիսացել է Հերմոնի և Գլունեյ վանքերի աշխարհագրական-տեղագրական նույնությունը, այդ պատճառով էլ համարվել է կասկածելի և չի ընդունվել*[3]*։ Ալիշանն*[4] *ու նրանից հետո բոլոր տեղագրողները*

[1] Ստ. Օրբելեան, *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 259—260։*

[2] Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 165—168:*

[3] Քաջբերունի, *Ճանապարհորդական նկատողութիւնք, Արարատ, 1888, էջ 441—443։*

[4] Ալիշան, *Սիսական, 125։*